

Երկրորդին համար բարի սկզբունքներն եւ օրինակներն ։ Ով որ առաջին հասակէն զգուշանայ ընդունայն ախտերէն և կրքերէն՝ նոյն իսկ երկրաւոր երջանկութիւն կը ստանայ։ Ո՛րչափ զոհեր ունի առողջապահութեան կանոնաց զանցառութիւնն։ Առողջութեան ամենակարևոր պայմանաց մին է մաքրութիւն բնակութեան և անձին. այս պատճառուած հոռվմէական կայսերութեան ժամանակ այնչափ հոչակեալ էին բաղանիք և պաշտպանեալ յօրինաց։ Մարմնամարզն և այլ մարմնական կրթանքն աւելորդ է յանձնել. կարերութիւնն անհրաժեշտ է։

Բարոյական արժանապատութեան զգացմունքը պէտք է կանուխ զարթուցանի ՚ի մանկունս, յիշելով որ նա աւանդապահ է ապագայ մարդուն բոլոր ազնուական կարողութեանց. այս զգացմունքը առաջին հիմն է բարոյականի. և յիրաւի, եթէ մարդուս չամաչեր և չակնածեր իւր խղճմտանաց առջև՝ ո՞ր իշխանութենէն պիտի երկնչի և հպատակի։ Կորստեան ճանապարհին մէջ՝ միայն պատժոց վախը վայրիկեան մ՝ ալ պիտի սանձէ իր ախտից անցագ տենչը, իսկ եթէ զայս ալ արհամարհէ.... Միայն Աստուծոյ և մեր խղճմտանաց աշքէն չենք կրնար խոյս տալ, ասկայն այս կէտին հասած անձ մը՝ այլ ևս չի ճանչնար այս գերագոյն դատաւորները. նա միայն բարձրագոյն Ատեանը կը ճանաչէ։ Ճանանք մանկանց սրտերու և մոտաց մէջ Աստուծոյ սիրոյն հետ բարոյական զգացմունքներն ալ դրոշմել, հայրենեաց և ընտանեաց սէր։

ԼԱ ԺԷՐՎԵԶ

ԶԲՈՅՑ

Նորման փոքրիկ նաւահանգիստն անհուն և մեծ էր ցընծութիւն։
Զի դարձողաց խմանսոյէ լուր եկած է ապաքէն։
Չըկնորսներ երկըրացի մեկնած են կայ շատ ժամանակ,
Զի հակառակ ալեաց հողմոց և օդերու մրրըկայոյդ
կ'ըսեն թէ ի կոչման՝ ոչ ոք պակաս կայ, և խորհին
Յերջանկութիւն վերագրածին յետ այն տըխուր օտարութեան։
Խորհին որդին կամ ամսափին զոր իրիկուան պիտի տեսնեն,
Որ պիտի քայ նրասիլ ընդ քեզ՝ տընակի մէջ իւր հայրենի,

Որ հեռաւոր իւր պըտոյտէն պիտի բերէ անտարակոյս,
Այն սովորներ զորս կը պահեն հինցած բուրուէ գուլպայի մէջ.
Եւ անոյշ պատմութիւններ՝ ոյց զողալով ականջ կուսոն
ի ժամ ճաշու, երբ սեղանի վերայ փայլի մաքուր մաքուր
Փըռոց ճերմակ ձիւնաթոյը, և երբ փակեալ լուսամբայց
Գայ ձըմերան տըխուր հովը ուժին բաղիսէլ իւր մըռմըռոց:
Ո՛հ ինչ քաղցր և անոյշ է երջանկութիւն վերադարձի:
Պիտի հասնին նոյն երեկոյ.....

Եւ այսպէս օրըն ողջոյն
Երավափին մօտ հաւաքեալ, մարդիկ, կանայք և աղջրկունք
ի հեռուստ տեսան անցնին նաւախըմբոց թշեթեւնթաց.
Եւ ծանուցեալ այն նաւերը՝ զորս իրարու կը ցուցանեն,
Զորս ճանաչեն նոյնքան սրախ որքան աշաց պարզ տեսութեամբ.
« Սուրբ Ցոլինաննէս. —

— Սուրբ Գօդոս. —

— Ահա սուրբըն Պոնավէնտաս.

— Իմ ամուսինս

— Ա՛հ իմ որդիս

— Եսովն է ուսած և ալէկոծ..

Բայց հազիւ թէ կը տաստանին.

— Այն'.... բեռներ պատուական.

— Անշուշտ յաջող որս մ'են ըրած

— Շատ լաւ արագ կ'ընթանան..

— Եթէ հիստիս—արևմըստեան քամին յանկարծ չի փրէ,

Ապահով պիտի հասնին մըթըննալէ յառաջ Ձեքան,

— Եւ երկու ժամ վերջը երկի՞ր.... »

Այն', երկի՞ր.

Անուն համեստ ու մտերիմ՝ որ և ունի իւր հըմայքը,

Միանգամայն թէ և նուազ՝ և առաւել քան զՀայրենեաց՝

Աղլեգնեալ Ովլիանին վասն այս խոնարհ յաղթսղաց :

Այդ այսպէս երազելով ամառնոցիս իմ վերեկն՝

Ես զիսէի նոցա երթըն ուրախ զուարթ՝ ի ծովափ,

Երբ մի անոյշ ձայն սրբատափին մեղմիւ հընչեց ականջիս :

« Ե՛ Պարոն, ճաշն է պատրաստ, փոթացէք ո՛հ շարժեցէք,

« Զի եթէ ոչ պիտի պաղի համեղ թանըն ի սեղան. »

Լա ժէրլէկն է, իւր մազերով խարտիագեղ՝ շառագոյն,

իւր հասակաւ ուղիղ—կանգուն և իւր դէմքով յանկուցիչ.

Հանգուանի ազնիւ կինըն, որ իմ քով էր իբրև ծառայ :

Նա համակ ուրախութիւն և յուզմունք էր : Եւ իւր պայծառ
Աշացը մէջ մի ճառագայթ անընդհատ կը փողփողէր,
Արիւնն ընդ փոյթ շառագունէր նորա մորթը ձիւնափայլ .
Կիրակնօրեայ զարդարուած էր իւր հանմբրձով նըրքահիւս ,
իւր մետաքսեայ լաշակովը և իւր խոյրով լաւագոյն .
Երկայն , երկայն , շորս ամսէ վերջ՝ իւր Պետրոսը տուն կռա զար ,
իւր Պետրոսը , իւր ամսուինն , իւր մարդը . եւ հայրիկը
Երիու փողիկ խարտիչեկաց , որք զայն իւրեանց մայր կուեն .
Մանկիկներ են չորս՝ հինգ ամաց , կայտառ զուարթ , անառակ ,
Որ միշտ նորա հետևէին , շըրջազգեստին կըծկած մէջ :

ԱՇ նա իրօք գեղեցիկ էր , շատ պայծառ էր և ուրախ ,
Ու հաճելի հայեցուածով՝ այդ արի կինըն լա ժէրվէզ :

Այն ինչ ճաշրս կ'աւարաէի , երբ գիշերըն յանկարծակի
Գունատ լրատով պայծառացաւ , մի ահաւոր պըտոյս գոռում
Հովով կարկուտ շառաշելով՝ զըզրողեցուց ըզմեր ծովափին .
Մըրըրիկն էր որ կը սկսէր , սոսկալի՛ կատաղութեամբ :
Եւ ալիքներ փըրփրաղէզ լեռնահանգոյն բարձրացունէր :

Մօրը փակչած սարսափահար , և դարձուցած կապիճք աշաց ,
Մանկիկներու՝ մին սուր ճէց : Ժէրվէզ իսկոյն դունատեցաւ :

Մի՛ վախներ մի՛ , ըսի նըմա , սա է մի պարզ մոլորահողմ .
Հով մի անցող թո՞ղ որ նորա՝ արդէն ելած են ի ցամաք :

Իսկոյն շարժմամբ երազափոյթ նորա աչեր յառեցան
Որմէն կախուած կապարեայ ժանրոցաւը ժամացոյցին .
« Ո՛ զիսէ »

Եւ մըրըրիկն զերիթ զըրնչիւն թընդանօթի
Մուշնելով ցնցեց ուժգին մեր տանիքը սասանեալ .

Նա ամելի գունատեցաւ . եւ իսկ սարսու մ'ըզգացի :

Մի՛ ժամ անցաւ , ահսելի , մի այլ սորա յաջործեց .

Դեռ ոչ

Եւ մեր շուրջն այն կատաղի մըրըրիկին՝
Զայնըն ահեղ ու իուզ խորունկ թընդար անդուզ և անդադար :

Այսպիսի մի յասպաղում՝ պէտք չէ զմեզ զարմացունէ ,
Ըսի ես՝ թըշուառ կինոջ : Եւ մանաւանդ՝ փոթորիկը
Որքան ալ լինէր ահեղ , զանոնք ֆէքան պիտի թողուր .

Եւ յետոյ մէկ մէկ բաժակ զի՞նի նուէր ի զի՞նետուն ...
— Զէ՛, չէ կարելի . . . որ նա յառաջ զիս տեսնելէ . . .

Եւ առանց բառ մ'իսկ յաւելլու, նա մընաց լուր և արխրազին,
Բաց փայտուն ապակոյն քով, որոնելով թափանցել մութն :
Ահա զուրմէն յանկարծակի գուրքն առգին բաղխեցա . . .
« Ինքն է, զոշեց, այս' ինքն է » .

Բայց զըրան սեմին վերայ
Յոհանկ աղօրօր՝ ազագուն երկայն հասակն երևեցա . . .
Ալեւոր հանրածանօթ՝ նոյն եղերաց մաքսադէտն . . .
Որ անձրևէն ողողուած և հըրացանն ալ գետին գարձած . . .
« Ո՞ւր է Պետրոսն », հարցուց Ժէրվէզ :

Այս հարցման մեր մաքսաւորն
Շըփոթեցաւ և նոյն զըրան սեմին վերայ կանգուն կեցած,
« Քո ամսափնդ, ո՛հ պիտի զայ . . . մակընթացի ասսկութիւնն
և Միակ պատճառն է յապաղման՝ ինչպէս և միւս բարեկամաց . . . »
Յետոյ զէպ ինձ մօտենալով ու մեղմ ձայնին անլրսելի . . .
« Ցրուին ահա՝ այս նամակը ինձի յանձնեց ձեզ համար » . . .
Մընչեւո Ժէրվէզ վաստակաբեկ ու շատ տըխուր կ'երթար գարձեալ
Պատուհանի զիմաց նըստիկ՝ ուշի ուշով նայել հեռուն,
Անդ մի անկիւն՝ զիս տանելով քաջ ալեոր մաքսաւորն,
իրու թէ՝ ինձ ունենար տալ մի նամակ . . .

« Ծովափին մերձ՝
և Երեք նաւեր խորտակեցան . . . ոչ ոք փըրկեալ նաւազներէ՝
« Որ վարէին զՍուրբ Պօղոս . . . մեռելոց մէջն է և Պետրոս :
« Խօճակոյսին վերայ ՚ի զուր՝ զիակները փընտրուեցին . . .
« Ո՛չ ինչ . . . տըխուր արիսծն իմացուցէր սա հէպ կընով,
« Ան Պարոն, ես չեմ կարող՝ սըրտէս արիւն պիտի անցնի » . . .
Յետոյ ծերուկ մաքսաւորը իւր հաստ ձայնըն բարձրացուցած,
Անհարթ՝ ուժով որպէս մի փող, միանգամայն դողդոջուն,
« Մնաք բարեաւ, ըստ Պարոն »

Եւ առանց ուրիշ խօսքի
Ելաւ, անհետ ընկըզմեցաւ, մըրըրկապինդ խաւարի մէջ :

Ես մի միայն մընացի՝ Ժէրվէզի հետ և իւր մանկանց
Որք ահարեկ արտասուալից՝ կըծկըտած են նորա շուրջ :

Ի՞նչ ահոելի մի պաշտօն, ի՞նչ սոսկալի վասն ինձ այս զիր :
Խօսի՞լ նորա. ի՞նչ անգութ բան, իսկ լըռելն է մեծ վաստիմիւն,
Թէ լըռէի, պիտի ընդ վայր երկարէի նորա յոյսն . . .

Բայց թերեւս, մի վայրկեան վերջ, պիտ' իմանար ամենայն ինչ.

Առաջին եկաւորէն՝ յանկարծակի և անգըթօրէն....

Խօսի՞լ ուրեմն . . . Սարսեցունե՞լ մի հարուածով այս հէզ էակն,

Զախշախել ցաւագին սիրտ որ բարախէր խելակորոյս,

Որ ի ինդիր երջանկոթեան մ' ակրնելեալ բազմաց հետէ....

Եւ վերածել այս ցընծութիւն մի մըշտատե տըխութեան.

Ա՛հ ահոելի մի պաշտօն :

Մակայն նորա մօտենալով,

Մինչ սկսիլ ջանայի ես յախողագոյն գարձուածքով,

Երբ յանկարծ՝ նա ինձ ցուցուց իւր մատներով հեռուն մի տեղ,

Մի անկիւն փոքրիկ գիւղին՝ մուժ գիշերոյն մէջ կորսուած.

« Տեսէց, ըստ, լոյս մի ահա՝ Գրիգորէ կընոջ տուն,

« Լոյս կը վասեն թերեղին տուն.... նոյնակն նաև ֆրանսաւաղին....

« Իւրեանց մարդիկ հասած են, ո՛հ.... անտարակից հասած են.

« Բայց Պետրոս.... պէտք է գիտնամ, գիտնամ այս ի՞նչ ըսել է ».

Եւ թողնելով պատուհանը, զինովիք պէտ տենապայոյզ

Ուզեց խոկոյն գուրս ելնել.... բայց բանալով իմ թևերը՝

Մի շարժումով կեցոցի.

« Ո՛հ, չէ բսի, մի՛ ելներ ».

Ինձ նայեցաւ, գունատեցաւ, և մահուան պէս՝ ըսպիտակ

Անգէտ՝ յիմար նա քայլերով յառաջացաւ դէպ ի դուռ :

« Ճիշդ է՛ ուրեմն ».

Բառ մի զուցել շրկարացի, լըսեցի :

Ո՛չ մի ճիշ; ոչ մի հառաջ. — իւր վրշտարեկ բարդուկները

Կապարի պէս վար ինկան և իւր պաղած ձեռներն խսկոյն

Փոքրիկ մանկանց զըսուփները փըստացին, ու մեղմօքէն՝

Գեղեցիկ ու փալփրուն լաշակին վրայ սեղմեցին,

Զոր զըրած էր լաւագոյն ևս ընդունելու բացակայն :

Եւ նստելով յանկարծ գետին.

« Ա՛ն ամուսինա, հէզ ամուսինս ».

Ո՛հ ո՛րքան վըշտակիր էր, բարի կինըն և ո՛րքան.

Զայն տեսնելով ցուրտ ու սառած արասառւէն ալ ցամացած

Կ'իմանայի թէ յայս աշխարհ, շատ նըմանին ամենն իրար,

Եւ թէ ո՛րքան ահաւոր են նոյն խակ իւրեանց հըծծանաց մէջ՝

Անարտասուք վիշտ ու ցաւեր և փոթորիկց անսանձու :

Մի երկայն վայրկենէ վերջ, աշերը միշտ գետին յառած.

« Եւ սակայն բոլոր նաւերն եկան անցան ծովաբացէն....

« Առ' վր Պօղոսն. — ես զայն տեսայ, — պարագրուիս քայլէր յառաջ

« Փոթորիկէն շատ շատ յառաջ ժամանած էր ի ֆերան:

« Ես զայն տեսայ... ես զայն տեսայ... բացագանձեց ողերդեալ.

« Ա՛հ կը խարեն զձեզ՝ պարո՞ն. Այո՛, անշուշա սուս կը խօսի՞ն » :

Եւ իւր տըժգոյն ձեռամբ նիհար շշափելով զիւր ճակատ,

իրքն թէ նա կամենար վանել զնովն յիմարութեան :

« Վերադառնայ պիտի Պետրոս... վերադառնայ... ես լաւ տեսայ,

« Եսովու վերայ զՍուրբ Պողոս, անցնիլ պայծառ երկնից ներքև.

« Հշշտապէս ես կարող եմ զայն ճանաչել՝ հազարի մէջ,

« Առաջասան յառաջկայ՝ ես իմ մասամբըս կարած եմ,

« Ո՞վ ըստ ձեզ, ո՞վ ձեզ ըստ, որ Պետրոս այլ չի դառնար յետ » .

Զըկար հիմայ այլ տարակոյս, յիմարութիւնն հասած էր դուռն,

եւ վայրիկենէ առ վայրիկեան պիտի լափէր իւր թշուառ որսն :

Յայնժամ բռնած իւր ձեռներէն,

Ըսի նորա մեղմօրէն

Ու ցած ձայնով, կարեկցութեամբ. « Տէր Աստուած քեզ կը զըրկէ

« Խեղճ Ժէրովէզ, ճշշմարտիւ, մի սոսկալի զառըն փորձանի,

« Բայց մի՛ վհատիր, կըտրիմ եղի՛ր, ո՞վ վշտակիր իմընդ Ժէրովէզ,

« Մի՛ մոռանար՝ որ ուսերուդ վերայ ունիս ծանըր մի բեռ,

« Մըտածէ հէզ փոքրիկներդ՝ որք քեզմէ զատ չունին ոչ ոչ » :

Եւ առնելով երկու տղայք իւր զըրկաց մէջ ամփոփեց,

Քիչ մ'հանդարտած, և զգալով իւր ցաւերու զառնութեան մէջ

Որ թէ և չէր այլ ամուսին, բայց կը միշտ իրքն մայր:

« Պետրոս ուրեմն... որչեց զարձեալ: Ո՞ն ամէն բան պիտ իմանամ:

— Անցոյս անդարձ, երեք նաւեր ընկրմած են, ըսի անոր

Եւ սուրբ Պողոս անոնց մէշն է, ամբաղջ իրեն նաւազներով:

— Դիակիներն ո՞ւր:

— Եւ ոչ մէկ հատ, քանզի ՚ի զուր ծովափին վրայ
Ցովինան այլոց հետ միասին երկար ժամեր թէ և վընտռած...

« Ո՞հ Աստուած Աստուծոյ, որովհետև լաւ չեն զիտած » .

Կ'ըսէ անհարթ խըրոխս մի ձայն, և միւս կողմէ յանկարծ մի ձեռք

Հաստատ հըզօր, ժըխնեաց վերայ աղաղակաւ՝ զարձունէր զուռն.

« Թշուասական, այդ մաքսաւորք՝ իրօք շատ լաւ աշեր ունին.

« Եւ ըսել թէ, անպիտաններ, վճարեալ են տէրութենէ » :

Եւ իւր կըպած՝ լայնեզր՝ հաստ քըթանէ զիսարկին տակ,

Թըրջած ու թաց, բայց վասվլուուն աշերն ու դէմք լրտազուարթ,

Ողջ և առողջ քաջ նաւասարին մեզի հանգէպ կանգնեցաւ:

Ժէրովէզ գոչեց. « Ահա՛ իմ մարդու »

Եւ մանկիկներ . « Հայրիկ , Հայրիկ » :
 Ես յայնժամ , կը հաւատա՞ք արդէն հոգին անձկութեան մէջ ,
 կը տանջուէր վայրիկենէ մ'վեր՝ անսովոր իմն օրինակաւ .
 Ես որ՝ պարզ հանդիսատես՝ անակընկալ այս վախճանին ,
 Ա/Ենապարզ այս տրամին՝ զոր մեր գաւառ տեսնէ յաճախ ,
 Ես զգացի՝ որ իմ աշերս գէշ ամպերով ծածկուեցան ,
 Եւ թալկացայ ու ուշաթափ ինկայ գետին մարեցայ

Երբ՝ մի վայրկեան յետոյ աշերս՝ բոլորովին մըթընցած
 թեարին ծայր օգնութեամբն ու ինամօք լա Ժէրմիզի ,
 Եւ Պեարոս՝ զիս ոսք հանած , ես ինքինքըս մինչ զըսայ ,
 Լըսեցի ես՝ ծովու մարդը որ կ'ըսէր ինձ « Բան մը չէ » .
 Եւ վերջն անոյշ ու ծաղրածու ողոր շեշտիւ .

« Փարիզացի » :

Հեղ. Ժագ Նորման

ԹԱՐԳՄԱՆ. ԿՈԹՈՂ

ԵԼԵԿՏՐԱԿԱՆ ՓՈԽԱՆՑՈՒՄՆ ՈՒԺՈՅ

Սինջդեմ տասը տարի առաջ ելեկտրական զօրութեան ամենէն աւելի կարևոր գործադրութիւնը լրացյ արտադրութիւնը կը համարուէր , այժմ ընդհակառակն նոյն զօրութեան միւս այլ յատկութիւնը ընդհանրապէս կ'ուսումնափուի , այսինքն մերենական աշխատութեանց փիխանցելը . Աւելորդ է այսուհետեւ ու է ապացոյց ելեկտրական լրացարութեան գերազանցութեան վրայ . և եթէ այս լրացը գեռ ամէն տեղ՝ ի գործ չէ գրուած՝ ոչ եթէ գեռ ապագայ մեծամեծ կատարելագործութեանց կամ դրական դժուարութեանց պատճառաւ է , այլ կազի լրացը լրացարութեան ընկերութեանց շահուց և այլ արտաքին պատճառաւց համար . Այն երկիրները յորս այս պարագայք չկան , — ինչպէս յԱմերիկա , 'ի Զին և 'ի Ճարոն — նաև յԵւրոպա իսկ ինչ ինչ քաղաքաց մէջ , ելեկտրական լրացարութիւնը ամէն գիտերէ աւելի յառաջադիմեց և ընդհանրացաւ . Ոչ մի քաղաք այլ ևս կը լսուի կազի լրացարութեան նոր ընկերութեանց կամ գործատանց հաստատուիլը . այն փոքրիկ քաղաքներն և գիւղերն՝